ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԼՂՀ ֆինանսների նախարարության 2016 թվականի մայիս ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2016 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 10606.7 մլն դրամ՝ պլանավորված 10404.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 1.9 %-ով կամ 202.7 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 2.0 %-ով կամ ավել 210.2 մլն դրամով:

Մայիս ամսում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 2107.5 մլն դրամ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցել է 1.3 %-ով կամ 26.5 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 24 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել (հաշվառումից հանվել)՝ 1 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 5 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել է 885.6 հազար դրամ: Նույն ժամանակահատվածում կատարվել են 65 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 28-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 15-ը՝ գործունեության չծավալման, 11-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի ու դրոշմավորման կանոնների պահպանման և 11 այլ ուսումնասիրություններ:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ներկայացված վարչական գործերից հաշվետու ամսում ավարտվել է 1 գործ, որով բավարարված գումարը կազմել է 622.4 հազար դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 9 վարչական գործով սահմանվել է 100.0 հազար դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 5027 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 4305:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել է թվով 24 պայմանագիր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 70 վարձու աշխատողի՝ 10.2 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 12 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Ապրիլի 2-ից հակառակորդի կողմից սանձազերծած ռազմական գործողություններով պայմանավորված՝ ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվել և շահագրգիռ մարմինների քննարկմանն է ներկայացվել «Շահութահարկի մասին», «Եկամտային հարկի մասին», «Հաստատագրված վճարների մասին» և «Արտոնագրային վճարների մասին» ԼՂՀ օրենքներում արտոնություններ նախատեսող նախագծերի փաթեթը:

ԼՂՀ կառավարության որոշումներով սահմանվել են «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից պետական գրանցում ստացած իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր հաշվառված անձանց, ինչպես նաև իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների պետական գրանցման (հաշվառման) մասին տեղեկությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարությանը տրամադրելու կարգը և այդ տեղեկությունների ցանկը» և «Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց հարկ վճարողի հաշվառման համարի տրամադրման դիմումի ձևը, դրանում լրացման ենթակա տվյալների ցանկը, հարկ վճարողի հաշվառման վկայականի ձևաթուղթը և դրանում պարունակվող տեղեկությունների ցանկը»:

ՀՀ և ԼՂՀ հարկային մարմինների միջև 2015-2017թթ. համագործակցության միջոցառումների ծրագրի շրջանակում հաշվետու ամսում ԼՂՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Հարությունյանը աշխատանքային հանդիպումներ է ունեցել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ղեկավար անձնակազմի հետ, քննարկել համագործակցության ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքը:

ՀՀ և ԼՂՀ հարկային մարմինների միջև իրականացվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը և «Սնանկության մասին» ԼՂՀ օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացվել առաջարկություններ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Ֆինանսների նախարարի հրամանով գործողության մեջ դրված «Նոր ստեղծված հարկ վճարողներին օժանդակության և սպասարկման նպատակով այցելությունների» կանոնակարգով նախատեսված գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով հրատարակվել են առևտրի հարկով, հաստատագրված վճարներով և ընդհանուր հարկման ռեժիմների վերաբերյալ ուղեցույցներ, որոնք այցելությունների ընթացքում անվճար կտրամադրվեն նորաստեղծ հարկ վճարողներին՝ հնարավորություն ընձեռնելով բարձրացնել նրանց իրազեկվածության մակարդակն ու խուսափել հնարավոր սխալներից:

«Ուսուցողական սեմինարներ կազմակերպելու մասին» N 123 հրամանի համաձայն՝ մայիսի 13-ից հարկային մարմնում կազմակերպվել են երկշաբաթյա տևողությամբ ուսուցողական դասընթացներ, որին մասնակցել են խոշոր հարկ վճարողների վարչության, արտաքին ապրանքաշրջանառության հաշվառման և հսկողության, Ստեփանակերտ քաղաքի և շրջանների հարկային տեսչությունների թվով 94 աշխատակիցներ:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 253, ելքագրվել՝ 93 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի: